

ՊԱՏՃԷՆ

Տ. Կ.

Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի եւ անհասանելի կամքն աստուծոյ եպիսկոպոսապետ եւ կաթողիկոս ամենայն Հայոց ծայրագոյն պատրիարք համազգական նախամեծար աթոռոյ Արարատեան առաքելական մայր եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ **Էջմիածնի.**

Ռուսիայի սահմաններում ապրող Մեր սիրելի և հարազատ զաւակներին Հայաստանեայց սուրբ Լուսաւորչի նուիրական Աթոռից հայրապետական օրհնութեամբ յայտնում ենք։

Հայրապետական գահ բարձրանալու առաջին իսկ օրերից Մենք փափագում էինք վերականգնել Հայաստանեայց եկեղեցու դարերի ընթացքում սրբութեամբ պահպանուած իրաւունքը նրա պաշտօնեաների վերաբերմամբ, սակայն ժամանակի ձախորդ հանգամանքները արգելք հանդիսացան Մեր այդ մտադրութեան իրականացմանը և Մեր իղձը ամբողջ 13 տարի մնաց անկատար։ Այժմս, որպէս Հայրապետ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու և ամենամեծ պատասխանատու նրա

ցանկալի բարգաւաճման և ծաղկեալ վիճակի թէ՛ Մեզ ընտրող հայ ազգի և թէ՛ Աստուծոյ առաջ, հասած ենք համարում ժամանակը և հասուն Մեր ժողովրդեան, ուստի Մեր այս Հայրապետական Կոնդակով վերականգնելով Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու դարերով սրբազործուած իրաւունքը՝ Քեզ ենք տալիս, ժողովուրդ Հայոց, թեմական առաջնորդների, յաջորդների, գործակալների և հոգևոր վարչական հաստատութեանց պաշտօնեաների ընտրութեան իրաւունքը, որից յետոյ ընտրեալները կը հրաւիրուին իրենց պաշտօնին պետութեան կողմից սահմանուած օրինական ճանապարհով։ Ի նկատի առնելով հայ ազգաբնակութեան վերաբերեալ վիճակագրական ճշգրիտ տեղեկութեանց թերութիւնը, առ այժմ մինչև նրանց վերստուգումը և հայ ժողովրդից ընտրեալ պատգամաւորների ժողովով հաստատուն կանոնադրութեան մշակումը, կարգադրում ենք ընտրութիւնները կատարել կաթողիկոսական ընտրութեան եղանակով ընդհանուր և անմիջական ձայնատուութեամբ։

Իսկականի վրայ Նորին Վեհափառութեան սեպհական ձեռքով ստորագրուած է

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

Ամենայն Հայոց

10 Մայիսի 1906 թ.
Ըստ Տոմարիս ՌՃԾԵ.
Մեր Հայրապետութեան ԺԴ-րդ տարին
Արարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնում
Վաղարշապատ
թ. 549.